ՄԵԿ ՍԱՐՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

2009 ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 Բանկի գործադիր տնօրենի ուղերձը [3]

2 Բանկի գործունեության հիմնական ուղղությունները [5]

3 Վարկավորում [6]

4 Ֆակտորինգ [8]

5 Ներդրումային բանկային ծառայություններ [9]

6 Ռիսկերի կառավարում [13]



7 Անձնակազմի կառավարում [14]

8 Ֆինանսական արդյունքներ [16]

9 Անկախ աուդիտորի եզրակացություն և ֆինանսական հաշվետվություններ [18]

ԱՐՄԱՎԻՍԲԱՆԿ

Թրաստիր & Ռեսուրսներ Թեմբրից

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
ք. Երևան 0010, Վ.Սարգսյան 10
Հեռ.՝ 52 95 93, 54 07 28
info@armswissbank.am
www. armswissbank.am

Created by:
FAINBERG
ADVERTISING AGENCY

1 ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ

Հարգելի տիկնայք և պարոնայք,

2009 թվականը ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ի համար եղել է դժվարությունների հաղթահարման և ձեռքբերումների տարի: Միջազգային ֆինանսական շուկաներում տիրող ճգնաժամային իրադրությամբ պայմանավորված ՀՀ տնտեսության, ինչպես նաև բիզնես միջավայրի պասիվությունն իրենց հերթին ոչ բարենպաստ պայմաններ են ստեղծել Բանկի գործունեության համար:

Չնայած այս ամենին՝ Բանկը ոչ միայն հաջողությամբ դիմակայել է տնտեսական ճգնաժամին, այլև գերակատարել է իր պլանավորված զուտ շահույթի ցուցանիշը՝ հասցնելով այն ավելի քան 560 մլն ՀՀ դրամի: Տնտեսությունում առկա ճգնաժամային իրավիճակն իր հետ բերեց հաճախորդների կողմից որոշակի պասիվացման դրսևորման, այնուամենայնիվ հաճախորդների բազան աճեց մոտ 50%-ով: Բանկը շարունակել է զարգանալ՝ ունենալով մի շարք էական ձեռքբերումներ, ապահովելով իր կողմից մատուցվող ծառայությունների թե՛ որակական, և թե՛ քանակական աճը, արդյունավետորեն մշակելով և ներդնելով նոր ծառայություններ ու պրոդուկտներ, իրականացնելով նորամուծություններ ՀՀ ֆինանսական շուկայում:

2009թ. Բանկը տեղափոխվել է նոր, առավել հարմարավետ շենք: Այն հանդիսանում է Բանկի սեփականությունը: Նոր ձեռքբերված շենքը լրացուցիչ հնարավորություններ է ընձեռել Բանկին մատուցվող ծառայությունների տեսականին ընդլայնելու և հաճախորդների թիվն ավելացնելու համար: Շենքն ունի ժամանակակից տեխնիկական հագեցվածություն, անհրաժեշտ անվտանգության համակարգեր և առավել հարմարավետ պայմաններ ինչպես աշխատակիցների, այնպես էլ հաճախորդների համար :

2009թ. Բանկը մասնակցել է Գերմանահայկական հիմնադրամի (KfW Հայաստան) ՓՄՁ վարկավորման ծրագրին, շարունակել է համագործակցությունը Գերմանահայկական հիմնադրամի «Վերականգնվող էներգետիկայի զարգացում» վարկային ծրագրի հետ: 2009թ. վերջին Բանկն ավարտել է բանակցությունները Վերակառուցման եվ Զարգացման Եվրոպական Բանկի (EBRD) հետ, որի արդյունքում 2010թ. սկզբին ՎԶԵԲ-ի (EBRD) հետ 2 ծրագրերի շրջանակներում («Փոքր և միջին ձեռնարկություններին վարկերի ֆինանսավորում» և «Առևտրի ֆինանսավորում») ստորագրվել են համագործակցության պայմանագրեր:

Բանկը շարունակում է իր հաճախորդներին և այլ ֆինանսական հաստատություններին մատուցել

ֆինանսական շուկայի գործիքներ և, որպես նորամուծություն, առաջարկում է օտարերկրյա արժեթղթերով ռեպո գործարքներ, արժեթղթերի միջազգային շուկաներում առևտրի էլեկտրոնային համակարգերով գործառնություններ: Աշխատանքներ են տարվել լիզինգի և հավատարմագրային կառավարման ներդրման ուղղությամբ: Բանկը պահպանել է պետական պարտատոմսերի շուկայի Գործակալի կարգավիճակը՝ հանդես գալով որպես իր հաճախորդների կողմից թողարկվող պարտատոմսերի մարքեթ-մեյքեր: Բանկը նախատեսում է շարունակել իր ակտիվ գործունեությունը ներդրումային ոլորտում:

Կարևորելով Բանկի հարատև զարգացումը, ակտիվների աճը, ինչպես նաև ֆինանսական կայունության ապահովումը՝ 2009թ. հոկտեմբերին 2,001 մլն ՀՀ դրամով համալրվել է Բանկի կանոնադրական կապիտալը՝ կազմելով 7,002 մլն ՀՀ դրամ:

Բանկը նաև նախատեսում է ընդլայնել իր գործընկերների շրջանակը՝ շեշտադրելով միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը: Բանկը նպատակ ունի վարկային և այլ նախագծերի շրջանակներում առաջիկա 2-3 տարում համագործակցել առնվազն երեք միջազգային ծրագրերի հետ :

Այս ամենը հնարավորություն կտա Բանկին իրականացնել իր միջնաժամկետ ծրագրային նպատակները:

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ն անցել է զարգացման որակական նոր փուլի, որտեղ զարգացման կայուն հիմքերը պահպանվելու են կուտակված փորձով, ձեռքբերած շուկայական դիրքով, հեղինակությամբ և որակյալ անձնակազմով:

Բանկի անձնակազմի անունից շնորհակալություն եմ հայտնում մեր Հաճախորդներին, Գործընկերներին, Խորհրդին և Բաժնետիրոջը՝ Բանկին ցուցաբերած վստահության և աջակցության, ինչպես նաև փոխշահավետ համագործակցության համար:

Ցանկանում եմ իմ վստահությունն ու երախտագիտությունը հայտնել նաև ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ի անձնակազմին իրենց նվիրված աշխատանքի համար:

Գևորգ Մաչանյան
Տնօրինության նախագահ
Գործադիր տնօրեն

2 ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հիմնադրման օրվանից մինչ օրս ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ն առաջնորդվում է կայուն և միջազգային փորձով ամրապնդված արժեքներով: Ավելի քան հինգ տարի է, ինչ ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը պահպանում և կատարելագործում է այդ արժեքները, որոնք են՝ հաճախորդի կարևորում, պրոֆեսիոնալիզմ, շիտակություն, գործընկերություն, գաղտնիություն, շրջահայացություն: Դրանք Բանկի և հաճախորդների միջև երկկողմանի բարգավաճում ապահովելու, ինչպես նաև գործարար մշակույթի ձևավորման ու ամրապնդման գրավականն են:

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը, հավատարիմ մնալով իր որդեգրած քաղաքականությանը, շարունակում է գործունեություն ծավալել երեք հիմնական ուղղություններով և մասնագիտանալ կորպորատիվ, ներդրումային և փրայվիթ (corporate, investment և private) բանկային ծառայությունների մատուցման ոլորտում՝ իր առջև ունենալով Հայաստանում այդ ուղղությամբ առաջատար բանկ դառնալու տեսլականը:

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ն առանձնանում է կորպորատիվ հաճախորդներին առաջարկվող համալիր ծառայությունների լայն տեսակներով՝ սկսած ավանդական բանկային ծառայություններից (վճարահաշվարկային, վարկային ծառայություններ, դեպոզիտային ճկուն սխեմաներ, առևտրի ֆինանսավորում և այլն) մինչև ոչ ավանդական բանկային ծառայություններ (այլընտրանքային ֆինանսավորում, ֆակտորինգ, ֆորվարդ, սվոփ, օպցիոն, ֆինանսական խորհրդատվության մատուցում և այլն):

Առևտրի ֆինանսավորումը, ֆակտորինգային ծառայությունները, ինչպես նաև ապրանքային և ֆինանսական ֆյուչերսները հիմնականում ուղղված են արտահանման և ներմուծման ոլորտում գործող հաճախորդներին՝ նպատակ ունենալով պահպանել նրանց մրցունակությունը տեղական և միջազգային շուկաներում, ընձեռել նոր շուկաներ ներթափանցելու հնարավորություն: 2008թ. հունվարից ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը հանդիսանում է Factors Chain International-ի (Միջազգային ֆակտորինգային ասոցիացիա) անդամ, ինչը հնարավորություն տվեց Բանկին միջազգային ֆակտորինգային գործառնություններ իրականացնել ավելի քան 70 երկրում գտնվող 247 անդամ բանկերի միջոցով:

Բանկի ռազմավարական ուղղություններից է միջազգային չափանիշներին համապատասխան ներդրումային բանկային ծառայությունների մատուցումը: Այդ նպատակով Բանկն իր ստեղծման օրվանից ակտիվ գործունեություն է ծավալում նշված ոլորտում մատուցվող ծառայություններն ընդլայնելու նպատակով և զգալի աշխատանքներ է տանում այս ոլորտում առաջատար դիրքեր գրավելու ուղղությամբ: Արդյունքում, Բանկն իր հաճախորդներին առաջարկում է ներդրումային գործիքների բավականին լայն տեսակների՝ ամերիկյան, եվրոպական և ռուսական ընկերությունների ու ներդրումային հիմնադրամների բաժնետոմսեր և դեպոզիտար ստացականներ, պետական ու կորպորատիվ պարտատոմսեր, ապրանքային ֆյուչերսներ, օտարերկրյա արժեթղթերով ռեպո և մարժինալ գործառնություններ:

Ֆինանսավորման և ածանցյալ գործիքների միջոցով մեր հաճախորդներն առավել արդյունավետ կարող են իրականացնել իրենց ռիսկերի դիվերսիֆիկացումը, ինչպես նաև դրամական հոսքերի կառավարումը:

Ժամանակակից շուկաների նորանոր մարտահրավերներին դիմագրավելու, ինչպես նաև ներդրումային նախագծեր մշակելու և իրագործելու համար ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ն իր կորպորատիվ հաճախորդներին առաջարկում է արժեթղթերի թողարկման ու տեղաբաշխման կազմակերպման ծառայություններ:

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը, լինելով առաջատարներից ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում և հանդիսանալով ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի Գործակալ, իրականացնում է շուկա ստեղծողի (մարքեթ-մեյքեր) գործառույթներ՝ նպաստելով արժեթղթերի հայաստանյան շուկայի իրացվելիության բարձրացմանը: ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը շարունակում է իր ակտիվ մասնակցությունը ՀՀ արժեթղթերի շուկայի և ֆինանսական միջնորդության ոլորտի օրենսդրական դաշտի բարեփոխումներին վերաբերող նախաձեռնություններին:

Բանկն իր հաճախորդներին առաջարկում է անհատականացված (tailor-made) պրոդուկտների փաթեթ՝ արժեթղթերի անհատական, կոլեկտիվ և այլ տիպի պորտֆելների ձևավորում, բրոքերային ու պահառուական ծառայություններ, ներդրումային գործառնությունների վերաբերյալ խորհրդատվության մատուցում: Ճկունությունը հաճախորդների հետ աշխատելիս կարևոր գործոն է Բանկի առաջանցիկ զարգացման ապահովման և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» բրենդի առաջմղման գործում:

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ն իր հաճախորդների հետ ձևավորում է երկարատև ու գործընկերային հարաբերություններ, որոնց հիմքում ընկած են սերտ և փոխշահավետ համագործակցությունը: Պրոֆեսիոնալ, հմուտ և փորձառու անձնակազմի շնորհիվ Բանկը բացահայտում է հաճախորդների կարիքները և ժամանակին տալիս բարձրակարգ ֆինանսական լուծումներ:

3 ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ

Չնայած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված ՀՀ տնտեսության և ֆինանսական հատվածի պասիվությանը, 2009թ. ընթացքում Բանկն իր ճկուն վարկային քաղաքականության շնորհիվ բավական ակտիվ գործունեություն է ծավալել, ինչի արդյունքում վարկային պորտֆելը աճել է ավելի քան 50%-ով:

2009թ. ընթացքում Բանկը տրամադրել է մոտ 8,4 մլրդ ՀՀ դրամ վարկ (2008թ. ընթացքում նույն ցուցանիշը կազմել է մոտ 2,2 մլրդ ՀՀ դրամ), ինչի արդյունքում Բանկի վարկային պորտֆելը տարեսկզբի 6,5 մլրդ ՀՀ դրամի համեմատությամբ տարվա վերջի դրությամբ կազմել է 9,7 մլրդ ՀՀ դրամ (ֆակտորինգը ներառված չէ):

Վարկային պորտֆելի աճի դինամիկան: (մլն ՀՀ դրամ)



Դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկային ներդրումներից ստացված տոկոսային եկամուտը կազմել է 1,207.9 մլն դրամ, 2008թ. և 2007թ. համապատասխանաբար 754,2 և 422,4 մլն ՀՀ դրամի փոխարեն: Վարկային ներդրումների միջին եկամտաբերությունը 14,39%-ից աճել է մինչև 15,06%:

Վարկային ներդրումներից ստացված տոկոսային եկամուտը (մլն ՀՀ դրամ)



2009թ. ընթացքում Բանկը համագործակցել է KfW զարգացման Բանկի վարկային ծրագրերը կառավարող Գերմանահայկական հիմնադրամի (GAF) հետ «Վերականգնվող էներգետիկայի զարգացում» և ՓՄՁ վարկավորում ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև ՀՀ ՓՄՁ ԶԱԿ (Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոն) հետ, որի երաշխավորությամբ տրամադրվում են վարկեր տնտեսության համար առավել կարևորություն ունեցող բնագավառներում: Ընդհանուր առմամբ նշված ծրագրերի շրջանակներում Բանկի կողմից ֆինանսավորվել են թվով վեց ՀԷԿ-եր և երեք փոքր և միջին ձեռնարկություններ: 2010թ. տարեսկզբին ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ի և ՎԶԵԲ (Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկ EBRD)-ի միջև կնքվել է պայմանագիր, համաձայն որի ՎԶԵԲ-ի կողմից Բանկին տրամադրվել է 5 մլն ԱՄՆ դոլարի վարկային ռեսուրսներ, որոնք նույնպես ուղղվելու են ՀՀ տնտեսության վարկավորմանը: Բացի այդ, ՎԶԵԲ-ի կողմից Բանկին է տրամադրվել ևս 3 մլն ԱՄՆ դոլարի ռեսուրս՝ որպես առևտրի ֆինանսավորման գործիք, որը նույնպես վարկավորման անուղղակի գործիք է:

Վարկային ռիսկերի կառավարման տեսանկյունից Բանկը խիստ կարևորում է վարկային ռիսկերի դիվերսիֆիկացիան (զանազանումը) ըստ արժույթների, տնտեսության ճյուղերի և աշխարհագրական դիրքի, ինչի արդյունքում Բանկը նվազեցնում է արժութային, շուկայական և այլ ռիսկերը:

Վարկային պորտֆելի կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի





4 ՖԱԿՏՈՐԻՆԳ

Չնայած միջազգային ֆինանսական ճգնաժամի բացասական ազդեցությանը համաշխարհային և ազգային տնտեսությունների ու ֆինանսական համակարգերի վրա՝ ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ի ֆակտորինգային պորտֆելը ոչ միայն չնվազեց, այլև զգալի աճ արձանագրեց:

2009թ. ընթացքում ներքին ֆակտորինգային շրջանառությունը 2008թ. համեմատ աճել է 56%–ով՝ 1,546 մլրդ-ից հասնելով 2,777 մլրդ ՀՀ դրամի: 2009թ. վերջին ֆակտորինգի պորտֆելը կազմել է 633,2 մլն ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցում է 66%-ով: 2009թ. ընթացքում ֆակտորինգի գծով ստացված եկամուտը, նախորդ տարվա համեմատ աճել է 60%-ով:

Բավականին լուրջ փոփոխություններ են արձանագրվել նաև ֆակտորինգի պորտֆելի որակական ցուցանիշներում: 2009թ. ֆակտորինգից օգտվող հաճախորդների քանակը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 58%-ով, ընդ որում ներգրավվել են հիմնականում խոշոր հաճախորդներ:

Հաշվետու տարվա ընթացքում Բանկն առանձնահատուկ ուշադրության է արժանացրել ֆակտորինգային ծառայության սպասարկման որակն՝ բարձրացնելով ծառայության արագությունը, հարմարավետությունը և, հետևաբար, հաճախորդների համար գրավչությունը: Մշակվել և ներդրվել են նաև նոր ծառայություններ, մասնավորապես, ցեսիա և ռեվերսային ֆակտորինգ: Դրանք հնարավորություն են տվել նոր հաճախորդներ ներգրավել, ինչպես նաև բավականին դրական արձագանք են ստացվել գործող հաճախորդների կողմից:

2009թ. սկզբին Բանկը վերանայել է ֆակտորինգային ռիսկերի գնահատման համակարգը՝ մշակելով նոր մեխանիզմ, որը հաշվի է առնում ոչ միայն նախորդ տարիների ֆակտորինգային շուկայի զարգացումն ու Բանկի շուրջ 3-ամյա փորձը, այլ նաև ճգնաժամի հետևանքների մեղմանն ուղղված ճշգրտումները:

Ներքին ֆակտորինգի շրջանառություն (մլն ՀՀ դրամ)



5 ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դիլերային գործունեություն

Բանկը 2009թ. ընթացքում շարունակել է ակտիվորեն իրականացնել ՀՀ պետական և կորպորատիվ արժեթղթերով գործառնություններ ներքին ֆինանսական շուկայում: Այսպես, տարվա ընթացքում երկրորդային շուկայում Բանկն իրականացրել է մոտ 20 մլրդ ՀՀ դրամ արժեքով պարտատոմսերի առք ու վաճառք, որից 1,1 մլրդ-ն իրականացվել են կորպորատիվ պարտատոմսերով՝ կազմելով Հայաստանի ֆոնդային բորսայում իրականացված գործառնությունների մոտ 12%-ը: Պարտատոմսերով իրականացված ռեպո գործառնությունների ծավալը կազմել է ավելի քան 319 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով գրեթե 12%-ով: Զուգահեռաբար Բանկը պահպանել է իր ակտիվ մասնակցությունը առաջնային տեղաբաշխումներին՝ տարվա ընթացքում գնելով մոտ 17,9 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով պետական պարտատոմսեր, ինչը գրեթե 2 անգամ գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը: 2009թ. Բանկը պահպանել է պետական պարտքի կառավարման գծով ՀՀ կառավարության գործակալի կարգավիճակը:

ՀՀ պետական պարտատոմսերով Բանկի գործառնությունների ծավալների դինամիկան ներկայացված է ստորև բերված գծապատկերում.



Առաջնային և երկրորդային շուկաներում պարտատոմսերով կատարած գործառնությունների ընդհանուր ծավալը (հազար ՀՀ դրամով)



Արժութային գործառնություններ (հազար ՀՀ դրամով)



Տարվա ընթացքում Բանկը շարունակել է մասնակցել Հայաստանի ֆոնդային բորսայում իրականացվող արտարժույթի առք ու վաճառքի սակարկություններին, հանդես է եկել միջբանկային անկանխիկ արտարժութային շուկայում՝ իրականացնելով միջազգային հիմնական փոխարկելի արժույթներով առք ու վաճառքի գործառնություններ, որոնց ընդհանուր ծավալը կազմել է մոտ 165,7 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 28%-ով: 2009թ. Բանկը շարունակել է իրականացնել արտարժութային ֆորվարդ գործարքներ, որոնց ծավալը կազմել է ավելի քան 1,6 մլրդ ՀՀ դրամ: Ինչ վերաբերում է արտարժութային սվոփ գործիքներով իրականացվող գործարքներին, ապա այս գծով հաշվետու տարվա ընթացքում միջբանկային շուկայում Բանկն իրականացրել է շուրջ 116 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով գործառնություններ: Ընդ որում նշված ծավալի մի զգալի մասը ձևավորվել է Բանկի՝ արտասահմանյան շուկաներում ծավալած գործունեությունից:

Հատկանշական է նաև այն, որ տարվա ընթացքում Բանկն իր հաճախորդների հետ նույնպես իրականացրել է սվոփ և ֆորվարդ գործարքներ, որոնց ծավալը 2009թ. ընթացքում կազմել է համապատասխանաբար 413 մլն և 533 մլն ՀՀ դրամ:

2009թ. Բանկը շարունակել է ակտիվ գործունեություն ծավալել բանկային ոսկու ստանդարտացված ծուլակտորներով՝ տարվա ընթացքում իրականացնելով շուրջ 36,7 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով առք ու վաճառքի գործառնություններ, որը նախորդ տարվա համեմատությամբ աճել է շուրջ 3%-ով:

Բանկի արժութային գործառնությունների ծավալների դինամիկան ներկայացված է վերը նշված գծապատկերում.

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն պատկանում է ՀՀ տարածքում գործող այն եզակի բանկերի թվին, որոնք իրականացնում են ՀՀ դրամի, ՀՀ պետական պարտատոմսերի և արտարժութային ֆորվարդ ու սվոփ գործիքների գնանշում Reuters համակարգում, ինչպես նաև ՀՀ դրամի և հիմնական արտարժույթների, ՀՀ պետական և կորպորատիվ պարտատոմսերի, արտարժութային ֆորվարդային գործիքների, միջբանկային ավանդային և ռեպո գործառնությունների տոկոսադրույքների գնանշում Bloomberg տեղեկատվական համակարգի՝ Բանկին պատկանող էջում:

Բանկն ակտիվ գործունեություն է ծավալում ինչպես ՀՀ ֆինանսական շուկայում (բանկերում տեղաբաշխելով և ներգրավելով կարճաժամկետ ու միջնաժամկետ դեպոզիտներ և վարկեր), այնպես էլ միջազգային փողի շուկայում՝ ներդնելով դեպոզիտներ արտասահմանյան առաջնակարգ բանկերում: Դեպոզիտների և վարկերի ընդհանուր ծավալը դրամային արտահայտությամբ կազմել է համապատասխանաբար 308 մլրդ և 41,6 մլրդ ՀՀ դրամ: Վերջիններս նախորդ տարվա համեմատությամբ աճել են համապատասխանաբար 1,45 և 1,47 անգամ:

Բրոքերային գործունեություն

Բանկի ռազմավարական ուղղություններից է միջազգային չափանիշներին համապատասխան ներդրումային բանկային ծառայությունների, այդ թվում արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցումը: Բանկն իր բրոքերային գործունեության շրջանակներում հաճախորդներին առաջարկում է ներդրումային գործիքների բավականին լայն տեսականի՝ ամերիկյան, եվրոպական և ռուսական ընկերությունների ու ներդրումային հիմնադրամների բաժնետոմսեր և դեպոզիտար ստացականներ, պետական և կորպորատիվ պարտատոմսեր, ապրանքային ֆյուչերսներ, օտարերկրյա արժեթղթերով ռեպո գործառնություններ:

Ներդրումային ծառայությունների ոլորտում Բանկը բավականին մեծ ձեռքբերումներ է ունեցել 2009թ. ընթացքում: Հաշվետու տարվա ընթացքում Բանկի բրոքերային հաճախորդների թիվը 2008թ. համեմատությամբ աճել է մոտ 2 անգամ: Գործարքներ են կնքվել ռուսական, եվրոպական և ամերիկյան բորսաներում շրջանառվող առաջատար ընկերությունների բաժնետոմսերով և դեպոզիտար ստացականներով: Ընդհանուր առմամբ, 2009թ. ընթացքում Բանկի հաճախորդների հանձնարարականների հիման վրա օտարերկրյա արժեթղթերով իրականացվել են թվով 1504 բրոքերային գործարքներ 6,9 մլրդ ՀՀ դրամին համարժեք ընդհանուր ծավալով, ինչը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է 25 անգամ: Նշենք նաև, որ վերոնշյալ ծավալի մեծ մասը՝ 6,7 մլրդ ՀՀ դրամ, բաժին է ընկել օտարերկրյա արժեթղթերով իրականացված բրոքերային գործարքներին: Հարկ է նշել նաև, որ օտարերկրյա արժեթղթերով իրականացված ռեպո գործարքների ծավալը կազմել է 650 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա 1 մլն ՀՀ դրամի համեմատությամբ:

Նշենք նաև, որ 2009թ. ընթացքում Բանկը բավականին ակտիվ մասնակցություն է ունեցել նաև Հայաստանի ֆոնդային բորսայի կորպորատիվ արժեթղթերի հարթակներում իրականացվող սակարկություններին: Այսպես օրինակ, Բանկն իր հաճախորդների հանձնարարականներով ՀՖԲ-ում կորպորատիվ պարտատոմսերով իրականացրել է թվով 23 բրոքերային գործարք 224,0 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով:

Կորպորատիվ արժեթղթերի թողարկումներ

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ 2009թ. կորպորատիվ պարտատոմսերի թողարկումների շուկան 2008թ. համեմատությամբ բավական պասիվ էր: Վերջինս պայմանավորված էր ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական հետևանքներով, քանի որ ՀՀ-ում զգալիորեն մեծացել էին ներդրումային ռիսկերը, գրանցվեցին տոկոսադրույքների մակարդակի, ինչպես նաև արտարժութային փոխարժեքի կտրուկ աճ:

2009թ. Բանկը մասնակցել է «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսերի հրապարակային առաջարկին հանդես գալով որպես տեղաբաշխող: Արդյունքում Բանկի կողմից տեղաբաշխվեց հանրային առաջարկի ընթացքում տեղաբաշխված բաժնետոմսերի ավելի քան 51,5%-ը:

2009թ. Բանկի կողմից իրականացվել են նաև «ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ-ի, «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի, «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի և «Էքսպրես Կրեդիտ ՈւՎԿ» ՓԲԸ-ի նախկինում կազմակերպված թողարկումների մարումների և արժեկտրոնների վճարումների սպասարկման աշխատանքները: Մասնավորապես, իրականացվել են «ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ-ի երկու թողարկման և «Է3-ՍԻ-Փի» ՓԲԸ-ի մեկ թողարկման պարտատոմսերի մարումներ՝ 1,350 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով և արժեկտրոնների 10 վճարում՝ 259,4 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, որոնց ընթացքում Բանկն աջակցել է թողարկողներին և մատուցել հաշվարկային բանկային ծառայություններ: Նշված գումարից շուրջ 257,7 մլն ՀՀ դրամը վճարվել է ներդրողներին՝ որպես արժեկտրոնային եկամուտ, իսկ շուրջ 1,7 մլն ՀՀ դրամը փոխանցվել է ՀՀ պետական բյուջե՝ որպես հարկային պարտավորություն:

2009թ.-ից Բանկն սկսել է մատուցել խորհրդատվական ծառայություններ կապիտալի կառուցվածքի, կորպորատիվ ռազմավարության, վերակազմակերպման և այլ հարցերի վերաբերյալ:



6 ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Բանկի ղեկավարությունը մշտապես կարևորել է Բանկի ռիսկերի արդյունավետ և անընդհատ կառավարումը: Ինչպես Բանկի Խորհուրդը, Գործադիր տնօրենը, Տնօրինությունը, այնպես էլ Բանկի յուրաքանչյուր աշխատակից ընդգրկված են Ռիսկերի կառավարման գործընթացում: Ռիսկերի վերլուծությունը կազմում է Բանկի ռազմավարական պլանավորման գործընթացի, ինչպես նաև ծրագրերի գնահատման և ներդրման անբաժանելի մասը:

Բանկում գործում է Ռիսկերի կառավարման առանձին ստորաբաժանում, որն անկախ է գործարքներն իրականացնող ստորաբաժանումներից և իրականացնում է ինչպես ընթացիկ, այնպես էլ որոշակի պարբերականությամբ հսկողություն Բանկի գործառնությունների նկատմամբ՝ ստուգելով առավել ռիսկային գործարքները և հետևելով Բանկի ներքին նորմատիվային դաշտին և նպատակային ցուցանիշներին (benchmark):

Բանկում մշակված և ներդրված է վարկային, շուկայական, իրացվելիության և գործառնական ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ՝ հիմնված ռիսկերի գնահատման և զսպման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների վրա: Բանկը պարբերաբար վերանայում է ներդրումային ուղենիշների գործող ուղեցույցը և սահմանաչափերը՝ այն համապատասխանեցնելով միջազգային և տեղական ֆինանսական շուկաներում տիրող իրավիճակին: Պարբերաբար կիրառվում են սթրես թեստերի մոդելներ՝ բանկին բնորոշ ռիսկերի ուսումնասիրության համար: Բանկում գործում են վարկային ռիսկի գնահատման, արտարժութային (փոխարկային և ածանցյալ) գործառնությունների սահմանաչափերի որոշման մեթոդական ուղեցույցներ: Շուկայական ռիսկի գնահատման համար կիրառվում է տոկոսադրույքի ռիսկի կառավարման հիմնական տարրերից մեկը՝ ժամկետայնության ճեղքվածքի (GAP) մոդելը:

Բանկում գործում է Ներքին աուդիտի ստորաբաժանում, որը վերահսկում է Բանկի Խորհրդի և Գործադիր մարմնի կողմից ընդունված ներքին ակտերի (քաղաքականություններ, կանոնակարգեր, կարգեր և այլն)՝ Բանկի գործունեությանը համապատասխանեցումը, ինչպես նաև ստուգումների միջոցով բացահայտում է հնարավոր ռիսկերը:

Բանկում գործում են խորհրդատվական և որոշումներ կայացնող կոլեգիալ մարմիններ՝ Տնօրինություն, Վարկային, Ներդրումային, Ակտիվների և պարտավորությունների կառավարման, Գործունեության համապատասխանության հսկման և Հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման կոմիտեներ: Ռիսկերի կառավարման գործընթացը կանոնակարգում է Բանկի Խորհուրդը, որը հաստատում է սահմանաչափեր, ուղենիշներ, ներդրումային ուղեցույցներ, վարկառուների և գործընկերների ընտրության չափանիշներ, գրավների նկատմամբ պահանջներ և այլն, որոնք սահմանափակում են Բանկի վարկային և շուկայական ռիսկերը: Գործառնական ռիսկերի կառավարման նպատակով Բանկը ձեռք է բերել Բանկային ռիսկերի համապարփակ ապահովագրության փաթեթ (BBB), հնարավոր կորուստները ծածկելու համար: Բացի այդ, Բանկի կողմից ձեռք է բերվել անշարժ և շարժական գույքի ապահովագրություն հրդեհներից և Բանկի գույքին հասցված այլ վնասներից ապահովագրվելու նպատակով:

7 ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Անձնակազմի կառավարման քաղաքականության նպատակն է՝ Բանկում անձնակազմի կառավարման որակի համապատասխանեցումը միջազգային չափանիշներին և անձնակազմի պատասխանատու, ստեղծագործական աշխատանքի համար բարենպաստ պայմանների ստեղծումը: Մասնավորապես, Բանկը կարևորում է կադրերի ծառայողական առաջխաղացման գործոնը, այն է՝ իր աշխատակիցների համար ստեղծել բոլոր անհրաժեշտ պայմանները մասնագիտական աճի, նոր գիտելիքների ձեռքբերման, նոր հմտությունների տիրապետման, ինչպես նաև սոցիալական բարեկեցության համար:

Բանկի գործառնությունների աճին զուգընթաց փոփոխվել է նաև Բանկի անձնակազմի կառուցվածքը և կազմը: 2009թ. ընթացքում Բանկը համալրել է իր անձնակազմը ինչպես փորձառու կադրերով, այնպես էլ երիտասարդ մասնագետներով (11 նոր աշխատակից): 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատակիցների թվաքանակը կազմել է 76 հոգի: Աշխատակիցների միջին տարիքը կազմում է 31 տարեկան:

Բանկում գործող կորպորատիվ կառավարման համակարգն առավել արդյունավետ դարձնելու նպատակով դեռ 2007թ. ստեղծված որոշումների կայացման առանձին կոլեգիալ մարմինը՝ Տնօրինությունը 2010թ. համալրվել է ևս 2 անդամով. նախորդ տարվա թվով հինգ անդամների փոխարեն այժմ այն բաղկացած է յոթ անդամից:

Բանկը մեծ ուշադրություն է դարձնում կադրերի պատրաստմանն ու վերապատրաստմանը՝ փոփոխվող օրենսդրական դաշտի յուրացման, տեխնոլոգիաների, ինստիտուցիոնալ գործընկերների հետ համագործակցության ուղիների ուսումնասիրման և այլ ուղղություններով:

2009թ. ընթացքում Բանկի 78 աշխատակից մասնակցել է 55 սեմինարի, շնորհանդեսների, կոնֆերանսների ՀՀ տարածքում, արտասահման է գործուղվել 5 աշխատակից՝ մասնակցելու արտասահմանյան կոնֆերանսների և վերապատրաստումների, ինչպես նաև կազմակերպվել է 49 ներքին սեմինար: Բանկի աշխատակիցների կողմից ներկայացվել են մի շարք վերլուծական աշխատանքներ՝ Բանկին առնչվող խնդիրների վերաբերյալ:

Բանկի սոցիալական ծրագրի շրջանակներում 2009թ. աշխատակիցների համար ներդրվեց առողջության ապահովագրության իրականացումը, որին տվյալ տարվա ընթացքում մասնակցեց աշխատակիցների 23%-ը: 2010թ. այս ծրագիրը կիրառվելու է Բանկի գրեթե բոլոր աշխատակիցների համար:

Բանկի աշխատակիցների համար կազմակերպվել են կորպորատիվ միջոցառումներ, երեկույթներ և այլն: Այս ամենը նպաստել է աշխատակիցների միջև միջանձնային հարաբերությունների ամրապնդմանը՝ ձևավորելով



համագործակցության և փոխադարձ հարգանքի մթնոլորտ ու թիմային առողջ ոգի:

Բանկի գործունեության և զարգացման փուլերին համահունչ վերանայվել է Բանկի կազմակերպական կառուցվածքը, որի արդյունքում 2010թ. սկզբին ստեղծվեց Բիզնեսի զարգացման դեպարտամենտ՝ շեշտադրելով հաճախորդների ներգրավումը և կարևորելով մարքեթինգային միջոցառումների իրականացումը, ինչպես նաև միջազգային կառույցների հետ համագործակցությունը:

Վերը նշված գծապատկերում ներկայացվում է Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը 01.01.2009թ.

8 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն ավարտել է իր գործունեության հինգերորդ տարին՝ բոլորհիմնական ցուցանիշների գծով գրանցելով էական աճ:

Հաշվետու տարվա ընթացքում Բանկի ընդհանուր ակտիվները նախորդ ժամանակահատվածի համեմատությամբ աճել են 6,1 մլրդ ՀՀ դրամով կամ 26%-ով՝ կազմելով 29,6 մլրդ ՀՀ դրամ: Ակտիվների կազմում տեղի է ունեցել կառուցվածքային փոփոխություն: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները նվազել են 275 մլն ՀՀ դրամով, ՀՀ կենտրոնական բանկում թղթակցային հաշվի մնացորդը նվազել է 435 մլն ՀՀ դրամով, հաճախորդներին տրված վարկերը աճել են 3,2 մլրդ ՀՀ դրամով, արժեթղթերի պորտֆելը աճել է 3.4 մլրդ ՀՀ դրամով և հիմնական միջոցներն աճել են 373 մլն ՀՀ դրամով:

Ակտիվների կառուցվածքը և դինամիկան (հազար ՀՀ դրամ)



Հաշվետու տարվա ընթացքում Բանկի ընդհանուր պարտավորությունները նախորդ ժամանակահատվածի համեմատությամբ աճել են 3,6 մլրդ ՀՀ դրամով կամ 20%-ով՝ կազմելով մոտ 21,5 մլրդ ՀՀ դրամ: Պարտավորությունների կազմում նույնպես տեղի է ունեցել կառուցվածքային փոփոխություն: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները աճել են 3,7 մլրդ ՀՀ դրամով, իսկ իրավաբանական և ֆիզիկական անձ հաճախորդների նկատմամբ պարտավորությունները նվազել են 251 մլն դրամով: Այս ամենը պայմանավորված է եղել տարբեր միջազգային կառույցների ծրագրերին մասնակցությամբ:

Պարտավորությունների կառուցվածքը և դինամիկան (հազար ՀՀ դրամ)



Հաշվետու տարվա ընթացքում Բանկի զուտ տոկոսային եկամուտները նախորդ ժամանակահատվածի համեմատությամբ աճել են 68%-ով կամ 517 մլն ՀՀ դրամով՝ կազմելով մոտ 1,3 մլրդ ՀՀ դրամ: Վարկերից և արժեթղթերից ստացված եկամուտների տեսակարար կշիռը տոկոսային եկամուտներում կազմել է 94%:

Բանկի տարեկան շահույթի աճի դինամիկան և շահութաբերության ցուցանիշները



2009թ. ընթացքում Բանկը ոչ միայն հաջողությամբ դիմակայել է համաշխարհային ֆինանսատնտեսական անկումային իրավիճակով պայմանավորված ՀՀ-ում տիրող տնտեսական ճգնաժամի հետևանքներին, այլև ապահովել է զուտ շահույթի աճ, որը կազմել է մոտ 560 մլն ՀՀ դրամ: 2008թ. համեմատությամբ շահույթը աճել է 280 մլն ՀՀ դրամով, որը հիմնականում պայմանավորված է եղել վարկային պորտֆելի ավելացմամբ, Բանկի եկամտաբեր ակտիվների, ՀՀ պետական պարտատոմսերի տարեկան եկամտաբերության, ինչպես նաև ոսկով իրականացվող գործարքների ծավալների աճով: Արդյունքում Բանկի ստեղծման օրվանից մինչև 2009թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում կուտակված չբաշխված շահույթը կազմել է ավելի քան 1 մլրդ ՀՀ դրամ:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում 2009թ. Բանկի բաժնետերը կանոնադրական կապիտալը ավելացրեց ավելի քան 2 մլրդ ՀՀ դրամով: Տարեվերջի դրությամբ Բանկի ընդհանուր կապիտալը կազմել է 8 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով 45,6%-ով, որը պայմանավորված է կանոնադրական կապիտալի վերը նշված համալրմամբ և հաշվետու ժամանակաշրջանում ստացված շահույթով:

Grant Thornton

Գրանթ Թորնթոն Ամիո ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. +374 10 260 964
Ֆ. +374 10 260 961

Grant Thornton Amyot LLC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia

T +374 10 260 964
F +374 10 260 961
www.gta.am

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի բաժնետիրոջը և խորհրդին,

Մենք ստուգել ենք «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Բանկ») կից ներկայացվող համառոտ ֆինանսական հաշվետվությունների (որոնք ներառում են 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համառոտ հաշվետվությունը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համառոտ հաշվետվությունները) համապատասխանությունը Բանկի՝ 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ամբողջական ֆինանսական հաշվետվությունների հետ՝ համաձայն Աուդիտի միջազգային ստանդարտների:

Բանկի ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Մեր պատասխանատվությունն է ստուգել սույն համառոտ ֆինանսական հաշվետվությունների համապատասխանությունը վերոհիշյալ ամբողջական ֆինանսական հաշվետվությունների հետ:

Ի հավելումն, մենք աուդիտի ենք ենթարկել Բանկի 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ամբողջական ֆինանսական հաշվետվությունները՝ պատրաստված համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, և 2010թ. 06 ապրիլի ամսաթվով թվագրված մեր եզրակացությունում մենք ներկայացրել ենք դրական եզրակացություն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մեր կարծիքով, կից ներկայացվող համառոտ ֆինանսական հաշվետվությունները ճշգրտորեն են ստացվել Բանկի ամբողջական ֆինանսական հաշվետվություններից:

2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների, ինչպես նաև աուդիտի շրջանակների վերաբերյալ ավելի լավ պատկերացում կազմելու համար համառոտ ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկել դրանց ստացման համար հիմք հանդիսացող ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացության հետ համատեղ:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն/բաժնետեր

Արմեն Վանյան
Աուդիտոր

06 ապրիլի, 2010թ.
ք. Երևան

Որակավորված աուդիտորներ եւ հաշվապահներ, կառավարման եւ հարկային խորհրդատուներ, իրավախորհրդատուներ
Auditors and Chartered Accountants, Management, Tax and Legal Consultants
Գրանթ Թորնթոն Ինթերնեյշնլի անդամ
Member of Grant Thornton International Ltd

Partners

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար ՀՀ դրամ	2009թ. դեկ.31-ին ավարտված տարվա համար	2008թ. դեկ.31-ին ավարտված տարվա համար
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	2,513,160	1,652,478
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(1,244,919)	(901,720)
Զուտ տոկոսային եկամուտներ	1,268,241	750,758
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	75,883	57,823
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(18,166)	(11,551)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ	57,717	46,272
Զուտ առևտրային եկամուտ	62,961	111,590
Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ շահույթ	156,733	45,971
Այլ եկամուտներ	74,930	43,281
Վարկային կորուստների արժեզրկման ծախս	(299,971)	(50,389)
Անձնակազմի գծով ծախսեր	(416,427)	(405,262)
Հիմնական միջոցների մաշվածություն	(34,423)	(25,275)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	(5,912)	(3,732)
Այլ ծախսեր	(176,127)	(158,583)
Շահույթ մինչև հարկում	687,722	354,631
Շահութահարկի գծով ծախս	(127,404)	(74,868)
Տարվա շահույթ	560,318	279,763
Այլ համապարփակ եկամուտ		
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ	69,733	21,691
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆինանսական արդյունքին փոխանցված զուտ (օգուտ)/վնաս	(109,833)	65,330
Այլ համապարփակ եկամուտին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	8,067	(17,452)
Տարվա այլ համապարփակ եկամուտ/(վնաս) առանց հարկերի	(32,033)	69,569
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	528,285	349,332

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2009թ. դեկ. 31-ի դրությամբ	2008թ. դեկ. 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	13	**2,030,121**	2,465,474
Թանկարժեք մետաղներ		**-**	110,496
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14	**2,595,767**	2,871,730
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	15	**10,376,790**	7,156,858
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	16	**6,771,933**	2,413,411
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	24	**7,070,431**	8,055,331
Հիմնական միջոցներ	17	**668,888**	289,892
Ոչ նյութական ակտիվներ	18	**41,853**	47,765
Հետաձգված հարկային ակտիվ	12	**38,995**	25,184
Այլ ակտիվներ	19	**54,483**	68,965
Ընդամենը՝ ակտիվներ		**29,649,261**	**23,505,106**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ	20	**8,150,878**	8,648,165
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	21	**4,674,120**	433,109
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	22	**8,593,538**	8,844,940
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		**81,375**	16,396
Այլ պարտավորություններ	23	**79,912**	22,343
Ընդամենը՝ պարտավորություններ		**21,579,823**	17,964,953
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	25	**7,002,000**	5,001,000
Գլխավոր պահուստ		**200,000**	100,000
Այլ պահուստներ		**(151,998)**	(119,965)
Չբաշխված շահույթ		**1,019,436**	559,118
Ընդամենը՝ սեփական կապիտալ		**8,069,438**	5,540,153
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		**29,649,261**	23,505,106

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար ՀՀ դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնա-հատման պահուստ	Կուտակված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 01.01.2008թ. դրությամբ	3,750,000	20,000	(189,534)	359,355	3,939,821
Բաժնետիրական կապիտալի ավելացում	1,251,000	-	-	-	1,251,000
Հատկացում պահուստին	-	80,000	-	(80,000)	-
Սեփականատերերի հետ գործարքներ	1,251,000	80,000	-	(80,000)	1,251,000
Տարվա շահույթ	-	-	-	279,763	279,763
Այլ համապարփակ եկամուտ					
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ	-	-	21,691	-	21,691
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆինանսական արդյունքին փոխանցված զուտ վնաս	-	-	65,330	-	65,330
Այլ համապարփակ եկամուտին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	(17,452)	-	(17,452)
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	-	-	69,569	279,763	349,332
Հաշվեկշիռը 31.12.08թ. դրությամբ	5,001,000	100,000	(119,965)	559,118	5,540,153
Բաժնետիրական կապիտալի ավելացում	2,001,000	-	-	-	2,001,000
Հատկացում պահուստին	-	100,000	-	(100,000)	-
Սեփականատերերի հետ գործարքներ	2,001,000	100,000	-	(100,000)	2,001,000
Տարվա շահույթ	-	-	-	560,318	560,318
Այլ համապարփակ եկամուտ					
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ	-	-	69,733	-	69,733
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆինանսական արդյունքին փոխանցած զուտ օգուտ	-	-	(109,833)	-	(109,833)
Այլ համապարփակ եկամուտին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	8,067	-	8,067
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	-	-	(32,033)	560,318	528,285
Հաշվեկշիռը 31.12.09թ. դրությամբ	7,002,000	200,000	(151,998)	1,019,436	8,069,438

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար ՀՀ դրամ	31.12.09թ-ին ավարտված տարվա համար	31.12.08թ-ին ավարտված տարվա համար
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Շահույթ մինչև հարկումը	687,722	354,631
Ճշգրտումներ		
Ակտիվների հնարավոր կորուստների արժեզրկման ծախս	299,971	50,389
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	40,335	29,007
Հիմնական միջոցների վաճառքից վնաս	36	96
Ստացվելիք տոկոսներ	(93,418)	(49,440)
Վճարվելիք տոկոսներ	9,712	17,964
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժութային վերագնահատումից զուտ (եկամուտ)/վնաս	(19,115)	6,100
Դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	925,243	408,747
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Թանկարժեք մետաղներ	110,496	(110,496)
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(803,315)	4,585,131
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(2,596,166)	(2,626,934)
Այլ ակտիվներ	56,798	(59,255)
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Ռեպո հաճախայնագրեր ՀՀ ԿԲ-ի հետ	(2,844,637)	5,896,055
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,308,391	(6,530,249)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	(2,137,488)	1,684,039
Այլ պարտավորություններ	52,944	(1,331)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը	(4,927,734)	3,245,707
Վճարված շահութահարկ	(68,171)	(114,294)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	(4,995,905)	3,131,413
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի (առք)/վաճառք	(3,311,025)	(4,144,713)
Հիմնական միջոցների առք	(414,255)	(257,225)
Հիմնական միջոցների վաճառք	800	-
Ոչ նյութական ակտիվների առք	-	(25,388)
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր	(3,724,480)	(4,427,326)
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի թողարկում	2,001,000	1,251,000
ՀՀ ԿԲ-ից վարկերի ստացում/(մարում)	2,321,440	417,595
Ֆինանս. կազմակերպ.-ից վարկերի ստացում/(մարում)	1,827,673	(420,460)
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	6,150,113	1,248,135
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում	(2,570,272)	(47,778)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	4,274,357	4,286,997
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	892,908	35,138
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	2,596,993	4,274,357
Լրացուցիչ տեղեկատվություն		
Ստացված տոկոսներ	2,419,742	1,603,038
Վճարված տոկոսներ	(1,235,207)	(883,756)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Անվանումը	«ԱՐՍՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Լիցենզիա	Բանկային գործունեության լիցենզիա #84՝ տրված ՀՀ ԿԲ-ի կողմից 25.02.2005թ.-ին
Հասցե	ՀՀ, Երևան 0010, Վ. Սարգսյան 10
ՀՎՀՀ	02574955
ԿԲ թղթակցային հաշիվ	103002102509
SWIFT կոդ	ARSJAM22
Reuters էջ	ARSJ, ARSI
Bloomberg էջ	ASWI
Հեռախոս	+374 10 529593, 584419, 540728
Ֆաքս	+374 10 529591
էլ-փոստ	info@armswissbank.am
URL	www.armswissbank.am,www.armswissbank.com
Սպասարկման ժամեր	9:30 - 17:00

Բանկի արտասահմանյան թղթակից բանկերի ցանկը 2009թ. դրությամբ

Ավստրիա			
Վիեննա	Raiffeisen Zentralbank Osterreich AG	EUR	RZBA AT WW
		USD	
Շվեյցարիա			
Ցյուրիխ	UBS AG	CHF	UBSW CH ZH80A
		EUR	
		USD	
Գերմանիա			
Ֆրանկֆուրտ Մայնի վրա	Commerzbank AG	EUR	COBA DE FF
		USD	
Ռուսաստանի Դաշնություն			
Մոսկվա	UniCreditBank	RUB	IMBK RU MM
		EUR	
		USD	
		GBP	
		CHF	
Մոսկվա	Promsvyazbank JSCB	CHF	PRMSRUMM
		EUR	
		USD	
Լատվիա			
Ռիգա	Norvik Bank JSC	EUR	LATBLV22
		USD	
Ուկրաինա			
Կիև	Ukrsotsbank JS CB	EUR	UKRSUAUX
		USD	
		UAH	
Հայաստանի Հանրապետություն			
Երևան	ՀՀ Կենտրոնական բանկ	EUR	CBRA AM 22
		USD	
		AMD	

Մասնակցություն և անդամակցություն
ասոցիացիաներին և մասնագիտական կազմակերպություններին.

Հայաստանի Բանկերի Միություն (UBA)
Հայաստանի Ֆոնդային Բորսա ԻԿԿ
Հայաշխատիային Միջբանկային Ֆինանսական Հեռահաղորդակցման Ընկերություն (SWIFT)
Հայաստանում Ամերիկայի Առևտրի Պալատ (AMCHAM)
Գերմանահայկական հիմնադրամի գործընկեր բանկ («Վերականգնվող էներգետիկայի զարգացում» վարկային ծրագիր)
Հայաստանի հիփոթեքային շուկայի մասնակիցների միություն (ՀՀՇՄՄ)
ԱԲՈԱ վարկային բյուրո
Առաջատար ֆակտորինգային կազմակերպությունների միջազգային ցանց (FCI)
ՓՄՁ ՊԱԿ (Փոքր և Միջին Ձեռնարկությունների Զարգացման Ազգային Կենտրոն)
Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ (EBRD)

Customer service department
Հաճախորդների սպասարկման դեպարտամենտ

Investment department
Ներդրումային դեպարտամենտ

Administration
Աշխատակազմ

IT department
SS դեպարտամենտ

Management board | Տնօրինություն

Lending department
Վարկային դեպարտամենտ

Accounting and reporting department
Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների դեպարտամենտ

Business development department
Բիզնեսի զարգացման դեպարտամենտ

Risk management division, Legal division, HR, Internal audit
Ռիսկերի կառավարման բաժին, Անձնակազմի կառավարման խումբ,
Իրավաբանական բաժին, Ներքին աուդիտ